

զանոնք, որ կաթողիկէ եղած են, և կ'ըսեն՝ թէ արդէն անոնք կորսնցուցած են իրենց հոգիները: Ուշադրութեամբ կը հսկեն որ իրենց կրօնաւորներն ու կղերականները յարաբերութիւն չունենան հոռմէականներու հետ, որպէս զի չընդգրկեն անոնց հաւատքն ու վարդապետութիւնը: Թոյլ չեն տար որ հոռմայեցի քարոզիչները եկեղեցի ունենան կամ բնակութիւն հաստատեն իրենց տուներուն մէջ. և երբ ասոնք առանձնաշնորհութիւն մը կը ստանան Շահէն, Ջուղայեցիները մեծ գումարներ կը ծախսեն արքայական հրամանագիրը յետս կոչել տալու համար, ինչպէս ըրին վեղարաւոր Հ. Գաբրիէլին և Յիսուսեան Հ. Ամադոյին դէմ, անցեալ տարի, զանոնք վտարելով իրենց քաղաքէն: Եւ որպէսզի ջնջեն յարումը, զոր կարգ մը Ջուղայեցիներ ունին հանդէպ Հոռմէական Եկեղեցւոյ, բազմաթիւ մոլորութիւններ ու մեղքեր կը վերագրեն քրիստոնեայ եւրոպացիներուն, յայտարարելով՝ թէ կաթողիկէները անհաւատներէն աւելի գէշ են. և այն աստիճանի կը զրպարանեն, որ անգամ մը իրենց փիլիպպոս Պատրիարքը (Կաթողիկոսը), չկարենալով այլևս հանդուրժել, սրանեղած ըսաւ՝ թէ կը ծածկեն հոռմայեցիներուն բարի գործերը եւ կը պատմեն սոսկ անոնց բերօրիւնները...» (14):

(14) Archivio S. C. P. F. Congressi Armeni, vol. I, fol. 29—30: